Անհապաղ հրապարակման համար

Հայաստան. 2008 թ. բախումների կողմնակալ հետապնդում
Անաչառ հետաքննության և արդարության ապահովում ցուցարարների դեմ ուժի գործադրման կապակցությամբ

(Նյու Յորք, փետրվարի 25, 2009) – «Հայաստանը դեռ պետք է պատասխանատվության կանչի ոստիկանությանը ոչ համաչափ ուժի կիրառման համար ցուցարարների հետ բախումներից մեկ տարի անց, որի արդյունքում առնվազն 10 մարդ զոհվեց», - նշվում է «Human Rights Watch»-ի այսօր հրապարակված համապարփակ զեկույցում:

«Ժողովրդավարությունը քարքարոտ ճանապարհին. Հայաստանի 2008 թ–ի վիճարկված նախագահական ընտրությունները, հետընտրական բռնությունները և միակողմանի պատասխանատվության կանչելու քաղաքականությունը» վերնագրով **64** էջանոց զեկույցը մանրամասնում է 2008 թ. փետրվարյան վիճարկված նախագահական ընրություններից հետո Հայաստանի մայրաքաղաք Երևանում 2008թ. մարտի 1-ին տեղի ունեցած բախումները ոստիկանության և ցուցարարների միջև: Զեկույցում նաև փաստվում է բռնությունների առնչությամբ կալանավորվածների նկատմամբ վատ վերաբերմունքը, մարտի 1-ին և դրանից հետո անհամափաչ ուժի կիրառման համապարփակ հետաքննության և պատասխանատվության պակասը: Զեկույցը պատրաստված է Հայաստանում 2008 և 2009 թվականներին հետազոտական երեք առաքելության ընթացքում իրականացրած ավելի քան 80 հարցազրույցի հիման վրա:

«Երևանում գրեթե մեկ տարի առաջ տեղի ունեցածի ամբողջական պատկերը դեռ պետք է ի հայտ գա», - ասում է Գիորգի Գոգիան՝ «Human Rights Watch»-ի հետազոտողը և զեկույցի հեղինակը: «Մի բան պարզ է. մարտի 1-ին օրվա տարբեր ժամանակահատվածներում անվտանգության ուժերը ցուցարարների նկատմամբ ոչ համաչափ ուժ են կիրառել»:

2008 թ. մարտի 1–ին Երևանի կենտրոնում ոստիկանությունը ընդհարվեց ցուցարարների հետ, որոնք բողոքում էին նախագահական ընտրությունների վիճարկված արդյունքների դեմ: Քաղաքի կենտրոնական

տարբեր հատվածներում և մի քանի միջադեպերի ընթացքում ոստիկանությունը առանց նախազգուշացնելու կամ առանց դիմադրության հանդիպելու հարձակվեց ցուցարարների վրա, բանակցեց, հետ քաշվեց, վերադարձավ հարձակման, և ի վերջո թեժ մարտի մեջ մտավ ցուցարարների մի փոքր խմբի հետ: Զոհվեց առնվազն տաս մարդ՝ ութ ցուցարար և ոստիկակության երկու ծառայող, բազմաթիվ մարդիկ վիրավորվեցին:

Այն դեպքում, երբ Հայաստանի իշխանությունները հետաքննել, դատապարտել և երբեմն թերացումներով ընթացող ու քաղաքական դրդապատճառներով պայմանավորված դատավարություններում մեղավոր են ճանաչել ընդդիմության տասնյակ անդամների ցույցը կազմակերպելու և բռնի անկարգություններին մասնակցելու համար, նրանք իրավապահ մարմինների ներկայացուցիչներից և ոչ մեկին մեղադրանք չեն ներկայացրել ոչ համաչափ ուժի կիրառման համար:

Վարչապետ Սերժ Սարգսյանը 2008թ. փետրվարի 19-ի նախագահական ընտրություններում հաղթող հայտարարվեց ընդդիմադիր թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի նկատմամբ: Մի խումբ ցուցարարներ, պնդելով, որ Սարգսյանի հաղթանակը ընտրակեղծիքների արդյունք է, ընտրություններից անմիջապես հետո նախաձեռնեցին շարունակական բողոքի ցույց Երևանի Ազատության հրապարակում՝ կազմակերպելով ամենօրյա հանրահավաքներ. ոմանք գիշերում էին հրապարակում տեղադրված վրաններում:

«Human Rights Watch»-ի հետազոտությամբ պարզվում է, որ ոստիկանությունը ոչ համաչափ ուժ է կիրառել մարտի 1-ի վաղ լուսաբացին իրականացրած խուզարկության ժամանակ, որը հիմնավորվում էր ցուցարարների մոտ զենքի առկայությունը ստուգելու անհրաժեշտությամբ: Սրա արդյունքում Երևանի կենտրոնում՝ Ֆրանսիայի դեսպանատան առջև, ավելի մեծ ցույց առաջացավ: Արդեն մինչև երեկո, երբ մայրաքաղաքի փողոցներում ավելի մեծ և բռնություններով զուգորդված հակամարտություն էր ծավալվում, պաշտոնից հեռացող նախագահ Ռոբերտ Քոչարյանը 20-օրյա արտակարգ դրություն հայտարարեց, որի ընթացքում արգելվում էին հանրային հավաքներն ու գործադուլները, իսկ լրատվամիջոցների ազատությունները՝ զգալիորեն սահմանափակվում:

«Հայաստանի իշխանությունների արձագանքը մարտիմեկյան իրադարձություններին միակողմանի էր», - ասում է Գոգիան: «Այն փաստը, որ ոստիկանությունը ժամանակ առ ժամանակ նույնպես ենթարկվել է

հարձակման ոչ մի կերպ չի արդարացնում նրանց կողմից ոչ համաչափ ուժի կիրառումը»:

Զեկույցում փաստվում են նաև մարտի 1-ի դեպքերից հետո կալանավորվածների հետ վատ վերաբերմունքը և պատշաճ դատավարության այլ խախտումներ: «Human Rights Watch»-ը զրուցել է մարդկանց հետ, որոնց ձերբակալության ընթացքում ծեծի էին ենթարկել, իսկ ոստիկանությունում կալանքի ժամանակ հարվածել, անպատվել ու սպառնացել էին: Ոտնահարվել էր մեր զրուցակից կալանավորների՝ իրենց գտնվելու մասին հարազատներին տեղեկացնելու իրավունքը, ինչպես նաև մերժվել էր իրենց ընտրությամբ իրավաբանի օգնություն ստանալու իրավունքը:

«Human Rights Watch»- ը հորդորում է կառավարությանը հետաքննել մարտի 1-ի ընդհարումներում ոստիկանության ուժի կիրառումը՝ շեշտելով, որ այդ օրվա յուրաքանչյուր ոստիկանական գործողություն պետք է առանձին գնահատվի: Այնտեղ, որտեղ ապացույցներ կան, որ ուժի կիրառումը դուրս է եկել օրինականության շրջանակներից, բոլոր օրինախախտները (այդ թվում և նրանք, ովքեր հրամաններ են արձակել) պետք է հետապնդվեն դատական կարգով: «Human Rights Watch»-ը պնդում է նաև, որ անհրաժեշտ է հետաքննություն իրականացնել մարտիմեկյան իրադարձությունների կապակցությամբ կալանավորվածների նկատմամբ վատ վերաբերմունքի մասին բոլոր պնդումների վերաբերյալ՝ հանգեցնելով նաև բոլոր պատասխանատուների հայտնաբերմանն ու հետապնդմանը:

«Human Rights Watch»-ի «Ժողովրդավարությունը քարքարոտ ճանապարհին. Հայաստանի 2008 թ–ի վիճարկված նախագահական ընտրությունները, հետընտրական բռնությունները և միակողմանի պատասխանատվության կանչելու քաղաքականությունը» վերնագրով զեկույցին ծանոթանալու համար այցելեք՝
http://hrw.org/en/node/80935/

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել
Նյու Յորքում՝ Ռեյչըլ Դեներին (անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն)՝ +1-212-216-1266, կամ +1-917-916-1266 (բջջային)
Թբիլիսիում՝ Գիորգի Գոգիային (անգլերեն, վրացերեն, ռուսերեն)՝ +995-77-42-12-35 (բջջային)